**Հայտարարություն**

**Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ), աղջիկների տեխնոլոգիայի (4 դասաժամ), տղաների տեխնոլոգիայի (4 դասաժամ), ռուսաց լեզվի (8 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), ֆիզիկայի (8 դասաժամ), հայ եկեղեցու պատմության ( 6 դասաժամ), հայրենագիտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **հրապարակման օրվանից մինչեւ 2022թ. օգոստոսի 19-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ.** Օգոստոսի 24-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Պրիվոլնոյե, 1 փող., շենք 55:

Տեղեկությունների համար զանգահարել (093)66-37-37 հեռախոսահամարով: